

ՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՈՒՆՔ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ  
ՊՈՆԶԻԱՅՈՒՄ

ԱԼԲԵՐՏ ՄՈՒՇԵՂՅԱՆ

Հռչակավոր արաբ բանաստեղծ Աբուլ-Ալա ալ ՄաՀարրին (973–1057), որին Ավետիք Իսահակյանն ընարել է իր նշանավոր պոեմի (1909) հերոս՝ Աբու-Լալա ՄաՀարի փոքր-ինչ ձևափոխված անունով, իր պոեզիայում առավելապես բանականության փիլիսոփայությունը հետևորդ էր. լինելով մեր Գրիգոր Նարեկացու ժամանակակիցը, նա իր ոտանավորներում և բեյթերում (չափածո հանգավոր երկտող) խարազանում էր սոցիալական և քաղաքական չարիքները, նշավակում աշխարհի անիրավ ու գոռոզ տերերին: Խոր հիասթափությունը ղանաղան կրոնական ուսմունքների, նույնիսկ իսլամի և Թորայի (Մովսես մարգարեի Հնգամատյանը) նկատմամբ նրան հասցրեց հոռետեսության ու աշխարհամերժման գաղափարին:

1975 թվականին, Ավ. Իսահակյանի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ, ձեռնարկեցի գրելու մի ընդարձակ ուսումնասիրություն (որը մինչև այժմ էլ անտիպ է)՝ նպատակ ունենալով բացահայտել Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա ՄաՀարի» պոեմի գրական աղբյուրները և փորձեցի վերհանել, թե գերմաներեն <sup>1</sup>ը հրատարակության միջնորդությամբ է հայ բանաստեղծը հաղորդակից գարձել միջնագարյան արաբ բանաստեղծ Աբուլ-Ալա ալ ՄաՀարրիի կյանքին ու ստեղծագործությանը և թե ի՞նչ ազդեցություն է ունեցել արաբ բանաստեղծի պոեզիան մեր բանաստեղծի նշանավոր պոեմի համանուն հերոսի գաղափարական ու գեղարվեստական կերպավորման վրա:

Պարզվում է, որ Իսահակյանին ծանոթ է եղել ոչ միայն գոկտոր Մ. Հաբերլանդի «Արևելքի գլխավոր գրականությունները» գերմաներեն քրեստոմատիան<sup>1</sup>, այլ նրան հատկապես ոգեշնչել և կենսագրական ու բանաստեղծական նյութ են մատակարարել գերմանացի արաբագետ, Բեռլինի Կայսերական ակադեմիայի իսկական անգամ Ալֆրեդ Ֆոն Կրեմերի թարգմանությունները և «Աբուլ-Ալա ՄաՀարրիի փիլիսոփայական բանաստեղծությունների մասին» աշխատությունը<sup>2</sup>: Ես գեռ այն ժամանակ նշված աղբյուրից թարգմանեցի արաբ բանաստեղծի բազմաթիվ բեյթեր ու ոտանավորներ, որոնք ցույց են տալիս, որ նրա պոեզիան, իրոք ներշնչանքի

1 Վիեննայի համալսարանի պրիվատ-դոցենտ, դոկտոր Մ. Հաբերլանդի «Die Hauptliteraturen des Orients» (II Teil, Leipzig, 1902) գիրքը հիշատակում է Ավ. Իսահակյանը գրականագետ Հ. Ղանայանյանի հետ ունեցած անձնական զրույցներում. տե՛ս Օ. Գ. Գ ա ն ա լ ա ն յ ա ն. Аветик Исаакян. Ереван, 1975, с. 52, прим. 2.

2 Կրեմերի թարգմանությունները տե՛ս՝ «Zeitschrift der Deutschen Morgenlandischen Gesellschaft». Bd. 29, 30, 31, 38. Wien. 1875–1884. Ն ու յ ն ի՝ «Über die philosophischen Gedichte des Abul' Ala Ma'arry», eine kulturgeschichtliche Studie von A. Freiherrn von Kremer, wirkl. Mitglieder der kais. Akademie der Wissenschaften, Wien, 1888.

աղբյուր է ծառայել մեր մեծ բանաստեղծի համար: Ահա դրանցից մի քանիսը.

Ջգո՛ւյշ կացեք բարեկամից,  
անծանոթից անցե՛ք ահով,  
Թե գիտունն էլ ճամփա ցույց տա՝  
չգգաք բնավ ձեզ ապահով:

Ո՛վ աշխարհի տիրակալներ,  
իշխելու մեջ է ձեր կյանքը,  
Քանի ապրեք, այնքան ավել  
չարիք է ծնում ձեր կամքը:

Փախի՛ր մարգկանցից և զվարճալի  
խրախճաններից փախի՛ր զայրագին,  
Քո այգ քարոզած ճշմարտությունը  
ամբոխի աչքում չունի ոչ մի գին:

Պերճ քաղաքից առավել է,  
Թե որ ապրես անապատում,  
Հեզ գազանը և շունն են լոկ  
այնտեղ մարդուն շրջապատում:

Օ՛, երևի այս աստղը նոր,  
որ ճառագում է երկնքից,  
Դառնա հիմար ժողովրդին  
փրկության լույս և ուղեկից:

Ժողովրդին, որ հնազանդ  
համբերում է զրկանք ու սով,  
Մինչդեռ նրանց ուղտերը հեզ  
նվաճեցին ավազը ծով:

Ու խորհում եմ, թե իսկապես  
սրանցից ո՞վ է դիտակից,—  
Նա՛, որ վրան է արդ հեծած,  
Թե՛ նա՛, որ քայլում է տակից:

Քեզ օգնել է հաճախ լոկ նա,  
ուժից բարիք չես սպասել,  
Բայց ում կանչել ես օգնության,  
քո նեղ օրին նա չի հասել:

Ապրի՛ր ուրեմն քեզ համար,  
րնկերներից էլ վազն արի,

Նրանք որ քեզ չապականեն,  
քեզ հո երբեք չեն զարդարի:

Բաշխիր գանձրգ ողջ ունեցած  
առանց բնավ ափսոսալու,  
Գիտցի՛ր, երբ որ շիրիմ մտնես,  
քո հետևից նա չի լալու:

Մարգիկ նման են հաճախ գայլերի՝  
հետեում են քեզ գունչները տնկած  
Ու պատրաստ են քեզ ձեռաց հոշոտել,  
երբ որ տկար ես և ուժից ընկած:

Հիմի ամեն ազգի գլխին  
մի սատանա է նստած,  
Ամեն քաղաք մի տեր ունի՝  
նրանց զարմից դիվոտած:

Թե կոտորվի ազգը սովից,  
Իսկի նրա պետքը չէ,  
Լոկ ինքն ապրի վայելքի մեջ,  
Ոնց որ խելքին կփրչե:

Կարգալով այս տողերը, որոնք առաջին անգամ են հնչում հայերեն, ընթերցողը կհասկանա, թե արաբ բանաստեղծն ինչո՞ւ է այդքան հոգեհարազատ դարձել Ավետիք Իսահակյանին և ներկայացել նրան իբրև պատրաստի դրական կերպար՝ պոեմի ղլխավոր հերոս, ինչպես բանաստեղծ Վիրգիլիոսը՝ Դանտեի և Տորքվատո Տասսոն՝ Գյոթեի համար՝ արտահայտելու անարդար հասարակութայն դեմ հայ բանաստեղծի հոգում կուտակված ցասումն ու մաղձը:

Այս ընգվզող խոհերը, հասարակութունից մեկուսանալու և անպատ քաշվելու մարդախույս ողորումները միանդամայն համահունչ էին իսահակյանական պոեզիայի ըմբոստ միտումներին: Հայտնի է, սակայն, թե Ավ. Իսահակյանն իր նշանավոր պոեմում արաբ բանաստեղծի շուրթերով ինչպիսի թեժ մակդիրներով է խարանում կնոջ պակշտ սերն ու իբրիսյան խարդավանքը: Արան հակառակ արաբ բանաստեղծը իր դիստիկոսներում անթաքույց համակրանքով է վերաբերում չարքաշ կնոջը, որն իր տկար ուսերին կրում է ընտանիքի գոյության ծանր բեռը՝

Աստված ահեղ դատաստանին  
առաջ կանանց կների,  
Որ հոգում են հեզ իլիկով  
ապրուստն իրենց տների...

Թե երբեք սիրտդ ցանկանա մի կին,  
լավն այն է՝ ընտրես լոկ չբեր մեկին:

Ակներևաբար, Աբուլ-Ալա ալ Մահարրիի խորաթափանց դիտողականությունն է պատճառոր, որ թեև նա չորս տարեկան հասակից զրկվել է տեսողությունից, բայց հայ բանաստեղծը օժտել է նրան անսահման պայծառատեսություն՝ ոչ միայն բառիս փոխաբերական, այլև ուղղակի առումով, քանզի Աբուլ-Ալան վերահասու էր ճշմարտության լույսին:

Ամե՞նքն են կույր, չկա՞ մեկր,  
որ ճանապարհը նշմարի,  
Թե՞ ես կույրրս լոկ պիտ տեսնեմ,  
ի՛նչն է ուղիղ ու ճշմարիտ:

Ի հակադրություն Ֆատալիզմի, Աբուլ-Ալան համոզված էր, որ մարդու ճակատագիրը տնօրինում են ոչ թե պատահական դիսլվաճները, այլ վերին բանականությունը, որի արտացոլումն է մարդուն շնորհված խոհեմությունը, ուստի մարդն իր գործադրած ապարդյուն ջանքերով ավելի է դժվարացնում իր կյանքի ընթացքը և ստեղծում իր համար անիմաստ հոգսեր:

Այսուհանդերձ, իմ խնդրո առարկան այսօր գրականագիտական հետադոտությունը չէ, այլ, որքան էլ տարօրինակ թվա, բժշկական մի տերմինի բացահայտումը: Աբուլ-Ալայի բեյթերը թարգմանելիս, 1976 թվականին նրա պոեզիայում հանդիպեցի մի թանկադին հայկական մասունքի: Նկատի ունեմ արաբ բանաստեղծի մի ոտանավորը՝ գետեղված Ալֆրեդ Կրեմերի վերոհիշյալ գերմաներեն հրատարակության մեջ, որից ակնհայտ է դառնում, թե անբուժելի ախտով տառապողները բուժվում էին Հայաստանից բերված հողով, հայկական բժշկության մի միջոց, որ, ըստ երևույթին, տարածում էր գտել Արաբական խալիֆաթում, ի մասնավորի՝ հյուսիսային Սիրիայում, որտեղ և գտնվում էր բանաստեղծի ծննդավայրը: Կարելի է ենթադրել, թե արաբ բանաստեղծն այստեղ նկատի է ունեցել Հայոց աշխարհից բերված սրբերի գերեզմանների հողը, քանի որ մեր մատենագրության մեջ բազմաթիվ վկայություններ կան հայ սուրբ նահատակների դերեզմանների վրա կատարված հրաշագործ բժշկության մասին, որով ապագինվում էին ոչ միայն հայերը, այլ նույնիսկ ոչ քրիստոնյա այլազգիները կամ անհավատները:

Բայց այսպես կարող է թվալ առաջին հայացքից: Իրականում, խոսքն այստեղ վերաբերում է միջնադարյան հայ բժշկության մեջ գործածվող հայկական կավի մի տեսակի, որն այդպես էլ կոչվում էր հայկավ կամ հայկավակ: Աբուլ-Ալայի հիշատակած հայոց հողը անտարակույս թարգմանությունն է հայկավ բառի, որ ավանդված է հին բժշկարաններում: Հայկական կավի բուժիչ հատկություններին անդրադարձել է Աբուլ-Ալայի հուշակավոր ժամանակակիցը՝ բժշկապետ Ե փիլիսոփա Աբու-Ա-

լի իբն Սինան (980–1037)<sup>3</sup>: Մեր միջնադարյան մատենագրության մեջ հայհոդ կամ հայկավ հիշատակում է հայտնի բժշկապետ Մխիթար Հերացին (1120–1200) իր «Ջերմանց մխիթարութիւն» բժշկական երկում<sup>4</sup>, որ գրել է 1180-ական թվականներին Կիլիկիայի Գրիգոր տղա կաթողիկոսի պատվերով՝ Դաշտային Կիլիկիայում տարածված տենդի ախտորոշման և բուժման նպատակով: Հայհոդը (terra Armena) կամ հայկավը (argilla Armena կամ bolus Armena) բժշկագիտության մեջ հայտնի էր հին ժամանակներից և արդյունահանվում էր պատմական Հայաստանի և ներկայիս Հայաստանի տարածքում (Իջևանի շրջան), և, ինչպես նշում է Մխիթար Հերացու աշխատության գերմաներենի թարգմանիչ դոկտոր է. Ջայդելը<sup>5</sup>, այն որպես բուժամիջոց արտահանվում էր Հայաստանից Արևմուտքի և մանավանդ Արևելքի երկրներ: Սովորական սիլիկատների և ալյումինի օքսիդի հետ միախառնված, այն պարունակում է զգալի քանակով երկաթի օքսիդ, որով և պայմանավորված է նրա վառ կարմիր գույնը:

Հայկավը մեծ համբավ էր վայելում որպես հակաթարախային միջոց. օգտագործվում էր լուծի, տարբեր օրգանների արյունահոսության կանխման, խոցի և ուռուցքների բուժման, ինչպես նաև դեղթափներ պատրաստելու համար՝ որպես հակամիջոց զանազան մահացու խայթոցների և թուլյների դեմ: Ոչ վաղ անցյալում Արևմտյան Եվրոպայում պատրաստված «Հայկական դեղահաբերով», որի բաղադրության մեջ մտնում էր հայկավը, բուժում էին սուսանակ կոչված սեռական ախտը<sup>6</sup>:

Մյուս հայ բժշկապետը՝ Ամիրդովլաթ Ամասիացին (1420–1496) այժի արյունով շաղախած հայկավը առաջարկում էր գործածել իբրև արյունահոսությունը դադարեցնելու միջոց<sup>7</sup>:

З а б у А л и И б н С и н о. Тиб Кунулар, II китоб, Содда дорилар хакида, Узбекистон ССР, Фанлар Академияси Нашриёти, Тошкент, 1956, с. 303, § 313– “Тин Армини Вал-Ани – Армянская или Анийская глина. Сущность: Это известная темнокрасная глина, которую употребляют золотых дел мастера для окрашивания золота; анийская (глина) близка к ней по действию. Естество: Холодное в первой степени, сухое во второй. Действия и свойства: [Армянская глина] останавливает кровь, так как ее сушащее свойство [доходит] до предела. Опухоли и прыщи: В виде питья или мази она помогает от чумных бубонов и препятствует распространению гниения в органах. Раны и язвы: Армянская глина удивительно действует на раны. Органы головы: Она препятствует катарам и помогает от кула”.

4 Մխիթարայ Բժշկապետի Հերացույ Ջերմանց մխիթարութիւն. Վենետիկ, 1832, գլ. ԻԲ, էջ 45. գլ. ԻԳ, էջ 55. գլ. ԻԵ, էջ 72-73. գլ. ԻԸ, էջ 77:

5 Mechtar's des Meisterarztes aus Her "Trost bei Fiebern", aus dem Mittelarmenischen ubersetzt von Dr. E. Scidel. Leipzig, 1908, S. 308.

6 Տե՛ս նույնի մասին՝ Մխիտար Գերացի, врач XII века. Утешение при лихорадках, под ред. действительного члена АМН СССР и АН АрмССР проф. Л. А. Оганесяна. Ереван, 1955, комментарии, с. 221, 226.

7 Ամիրդովլաթի Ամասիացույ Անգիտաց անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց. Վիեննա, 1926, § 647. «Եւ իւր փոխանն ի արուն կապելն հոռմցի կաւն է, եւ կամ հայկաւն է, որ քաւշի արընով լինի շաղախած»: Տե՛ս նաև А м и р д о в л а т А м а с и а - ц и и. Ненужное для неучей, пер. с армянского языка и комментарии доктора мед. наук С. А. Варданян. М., 1990, с. 105: “А заменителем ее (печатной глины) как кровоостанавливающего средства являются греческая, а также армянская глина, т. е. һайкав, которые замешаны на козлиной крови”.

Հայկավ կամ հայկավակ նյութի մասին որոշակի տեղեկություններ են հաղորդում «Նոր հայկազյան բառգիրքը»<sup>8</sup>, Ստ. Մալխասյանցի «Բացատրական բառարանը» և այլն: Հր. Աճառյանը «Արմատական բառարանում» (հ. 2, էջ 561) կավ բառի տակ բերում է հայկավ-ի մի շարք այլաբանական անվանումներ, որոնք բոլորն էլ բառացի թարգմանություն են հայերենից՝ հունարեն – bolos Armenia, լատիներեն – bolus Armeniaca (Մալխասյանցի մոտ՝ bolus Armenius), արաբերեն – tin Armani, թուրքերեն – Kilermeni, որից փոխառյալ ռուսերեն – Kilermeni: Այս անվանումները վկայում են, թե հայկավը որքան լայն տարածում է ունեցել այլ ժողովուրդների մեջ որպես բուժամիջոց: Ցավոք, այն մոռացված է մեր օրերում՝ չի մտել նույնիսկ Հայկական հանրագիտարան, չի կիրառվում պաշտոնական բժշկության մեջ և գործածվում է միայն երբեմն ժողովրդական դեղագործության մեջ: Եվ դա միակ դեպքը չէ:

Նույն ձևով արդի գործնական բժշկությունից դուրս է մնացել Հայքարը (pietra Armena կամ lapis Armena), որը հայտնի էր դեռևս մեր թվարկության I դարում Պլինիոսի և Դիոսկորիդոսի երկերից որպես բուժամիջոց<sup>9</sup> և հիշատակվում է Ավիցեննայի մոտ, ինչպես և X դարի բոլոր արաբական բժշկարաններում արաբերեն «խաջար Արմինի» (Хаджар Армини, հայկական քար) անունով<sup>10</sup>: Միջնադարյան հայ բժիշկներն այն գործադրում էին որպես ոսկրախտի բուժման և մաղձաբեր միջոց:

Ուշագրավ է, որ Աբուլ-Ալա ալ Մահարրիի մոտ հայկավը հիշատակված է Մխիթար Հերացու երկից շուրջ 180 տարի առաջ:

Այսպիսով, Ավիցեննայի բժշկարանից և Աբուլ-Ալայի ստորև բերվող բանաստեղծությունից դժվար չէ եղրակացնել, որ հայկավը X-XI դարերում գործածության մեջ է եղել Միջին Ասիայից մինչև Աբուլ-Ալայի հայրենիքը՝ Սիրիան ընկած լայնարձակ տարածքում: Ասվածին ավելացնենք, որ հայերենում հայկավը կոչվել է նաև սիս<sup>11</sup>:

Ահավասիկ ևս մի հայկական մասունք՝ հայհող կամ հայկավ (արաբերեն՝ թին արմանի), որն իրրև բուժամիջոց շատ հարդի էր միջնադարյան բժշկագիտության մեջ, ավանդվել է նաև արաբական պոեզիայում և փիլիսոփայական խոհեր է արծարծել արաբ բանաստեղծի հոգում մարդու ճակատագրի, կյանքի ու մահվան առեղծվածի մասին, ծնունդ տալով այս բանաստեղծությանը:

<sup>8</sup> «Հայկավ, կամ Հայոց կավ. Βολος αρμενια, Bolus Armenius. ոմկ. գիլ Երմէնի, թին էրմանի, գիլի սուրիս. Ազգ ընտիր և կարմրորակ կաւոյ ի հայս»-Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, էջ 32:

<sup>9</sup> St'v Комментарий проф. Л. А. Оганесяна к книге "Мхитар Гераци, врач XII века. Утешение при лихарадках", с. 222.

<sup>10</sup> А б у А л и И б н С и н о. Указ. соч., с. 294: "Хаджар Армини – "Армянский камень" – Сущность: Этот камень содержит в себе нечто от ляпис-лазури, но не имеет ни цвета, ни плотности этого камня"; с. 295: "Он сильно гонит черную желчь, сильнее, чем ляпис-лазурь, и им иногда ограничиваются, пренебрегая чемерицей, так как с его помощью преодолевают болезни от черной желчи".

<sup>11</sup> Ս տ. Մ ա լ ի ս ս Ե ա ն ց. Հայերեն բացատրական բառարան. Երեւան 1945, հ. չորրորդ, էջ 216, «Սիս» բառի տակ:

Նա բուժվում է հայոց հողով  
 ու ինքն իրեն հույս է տալիս,  
 Իբրև բախտից չարաբաստիկ  
 լով գրանով խույս է տալիս:

Չի՛ օգնի ջուրն անմահական,  
 Թե որ ժամը գա օրհասի,  
 Բայց քանի գեռ այն չի՛ հասել,  
 քեզ թույնն էլ իսկ չի վնասի:

#### АРМЯНСКАЯ РЕЛИКВИЯ В СРЕДНЕВЕКОВОЙ АРАБСКОЙ ПОЭЗИИ

АЛЬБЕРТ МУШЕГЯН

#### Р е з ю м е

Героem бунтарско-философской поэмы Аветика Исаакяна "Абу-Лала Маари" (1909г.) стал арабский поэт Абул-Ала ал Маари (973—1057), автор медитативно-философских стихов и двустийший рационалистического направления. В статье впервые приводятся стихи Абул-Ала ал Маари в армянском переводе, свидетельствующие о духовном родстве его поэзии с социально-бунтарскими устремлениями армянского поэта, восставшего против несправедливости и социальной необустроенности общества. Впервые в статье в армянском переводе представлено стихотворение Маари, где упоминается о средневековом уникальном лечебном средстве, называемом "Армянская земля", которое добывалось на территории исторической Армении, а также в нынешнем Иджеванском районе Армении. Целебные свойства "Армянской земли", именуемой по-армянски "хайкав", исследовал и описал еще Авиценна, современник Маари. Таким образом, за 180 лет до Мхитара Гераци лекарство "Армянская земля", помимо трудов Авиценны, выступало и в средневековой арабской поэзии, подавая повод к фаталистическим размышлениям Маари о неизбежности человеческого рока.

#### AN ARMENIAN RELIC IN MEDIEVAL ARAB POETRY

ALBERT MUSHEGHYAN

#### S u m m a r y

The Arab poet AbulAla al Mahari (937-1057), the author of meditative-philosophic poems and verses of rationalistic inclination, was so close spiritually to the Armenian poet Avetik Isahakian, that the latter chose him as his protagonist in his rebellious philosophical poem "AbuLala Mahari" (1909). Poems by AbulAla al Mahari, translated into Armenian for the first

time, are the vivid evidence of the spiritual kinship of his poetry with the social turbulent ambitions of the Armenian poet, who rebelled against the reigning injustice and the incomplete social structure of society. The author of the article has presented Mahari's poem in Armenian translation for the first time, where a unique Medieval remedy is mentioned, which is called "Armenian soil". It can be found on the territory of historical Armenia and also in present Idjevan Region in Armenia. The healing qualities of "the Armenian soil", the Armenian name of which is "haikav", was already investigated and described by the physician and famous philosopher Avicenna, the poet Mahari's contemporary. Thus, 180 years before the Armenian physician Mchitar Heratsi the remedy "Armenian soil" had been mentioned in Medieval Arab poetry, apart from Avicenna's works, bringing forth Mahari's fatalistic reflections on human fate.